


ԿԱՐԾԻՔ

ՌՈՒԶԱՆՆԱ ԲԱՐԻՋԱՆԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ «ՆՈՐԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԿՐԱ (ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ)» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.06 - «ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ինովացիաները (նորաստեղծությունները) երկրի միջազգային մրցունակության ապահովման կարևորագույն հիմնաքարերից են: Դրանք հանգեցնում են ոչ միայն կազմակերպությունների տնտեսական գործունեության արդյունավետության բարձրացմանը և տնտեսության արդիականացմանը, այլև վերջինիս կառուցվածքի որակական բարելավմանը և տնտեսական աճի ավելի բարձր մակարդակի ապահովմանը: Դրանց զարգացումը երկրում կարևոր գործոն են նաև շուկայական մրցակցության խթանման և օտարերկրյա ներդրումների ներգրավման համար: Նորարարության ազդեցությունը միջազգային մրցունակության վրա արտահայտվում է տարբեր հարթություններում, ներառյալ տնտեսական աճը, արտաքին առևտրի արդյունավետությունը, միջազգային շուկաներում գերակայությունը, տնտեսական ճգնաժամերին դիմակայելու մեծ ներուժը, կայուն զարգացումը և այլն:

Այն երկրները, որոնք առաջնահերթություն են տալիս ինովացիոն քաղաքականությանը և ներդրումներ են կատարում ինովացիաների մեջ, օժտված են համաշխարհային տնտեսության զարգացման գործընթացում ի հայտ եկող տնտեսական հիմնախնդիրները հաղթահարելու մեծ կարողություններով՝ ապահովելով իրենց ուրույն տեղը միջազգային տնտեսական հարաբերություններում որպես մրցունակ և զարգացող տնտեսություններ: Շնորհիվ համապարփակ և արդյունավետ ինովացիոն ռազմավարության մշակման և ներդրման, ինչպես նաև ինովացիոն գործունեության զարգացմանը միտված պետական աջակցության՝ երկրները կարող են ապահովել երկարաժամկետ տնտեսական հաջողություններ և միջազգային մրցունակության աճ:



ՀՀ տնտեսության արդիականացման և միջազգային մրցունակության հետևողական աճի տեսանյունից ևս կարևոր նշանակություն ունի ինովացիաների զարգացումը, և այս համատեքստում կարևոր է ինովացիոն քաղաքականության բարելավումը և ազգային ինովացիոն ռազմավարության կատարելագործումը՝ քաղաքականության գործիքների արդյունավետ և ճիշտ համադրմամբ ու կիրառմամբ: Այս առումով, կարևոր է ՀՀ ինովացիոն ռեսուրսների ներուժի վերհանումը, ինչպես նաև դրա հիմքի վրա ինովացիաների և տնտեսության միջազգային մրցունակության կապի ու փոխազդեցության գնահատումը, ինչն էլ ընկած է սույն ատենախոսության **թեմայի արդիականության** հիմքում:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը ՀՀ տնտեսության միջազգային մրցունակության և ինովացիաների միջև փոխառնչության գնահատումն է և ՀՀ-ում ինովացիոն քաղաքականության բարելավման ուղիների բացահայտումը: Ելնելով սահմանված նպատակից՝ ատենախոսությունում առաջադրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել միջազգային մրցունակության չափմանը վերաբերող տեսական մոտեցումները և առավել նշանակալի էմպիրիկ հետազոտությունները, ինովացիոն քաղաքականության միջազգային փորձը, գործիքակազմը և քաղաքականության իրացման մեխանիզմները,
- ուսումնասիրել ինովացիայի տարբեր տեսակների չափման տեսական մոտեցումները, ինչպես նաև քննական վերլուծության տեսանկյունից դիտարկել միկրո և մակրոմակարդակներում նշանակալի էմպիրիկ հետազոտությունները,
- հետազոտել ՀՀ ինովացիոն համակարգի ինստիտուցիոնալ շրջանակը՝ ուսումնասիրելով ինովացիոն գործունեությանն առնչվող օրենսդրական դաշտը և մինչ այժմ կիրառված մեխանիզմները,
- ուսումնասիրել ՀՀ ինովացիոն ենթակառուցվածքները, դրանց գործունեությանը նպաստող և խոչընդոտող գործոնները, մարդկային կապիտալի վիճակը և դրա զարգացման խորքային խնդիրները,
- վերլուծել ՀՀ ձեռնարկությունների ինովացիոն կատարողականը և գնահատել դրանց ինովացիոն գործունեության և ձեռնարկության չափի, ինչպես նաև գործունեության ոլորտի փոխառնչությունները,

- գնահատել ձեռնարկության ինովացիոն գործունեության և վաճառքի աշխարհագրական ուղղության փոխառնչությունները,
- գնահատել մակրոմակարդակում ինովացիայի և միջազգային մրցունակության միջև կապը,
- համապարփակ վերլուծության ենթարկել ՀՀ ինովացիոն ռեսուրսներն ու դրանց կենսագործման արդյունքները:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը ՀՀ տնտեսության միջազգային մրցունակության և ինովացիոն գործունեության փոխառնչությունն է: Հետազոտության առարկան ՀՀ միջազգային մրցունակության վրա ինովացիաների ազդեցության գնահատումն է:

Հետազոտության մեթոդական, տեսական և տեղեկատվական հիմքերը: Հետազոտությունում կիրառվել են գիտական ճանաչողության մի շարք մեթոդներ, մասնավորապես՝ համեմատական վերլուծության, վիճակագրական, գրաֆիկական մեկնաբանման և էկոնոմետրիկ մոդելավորման մեթոդները: Վերջինս ներառում է ոչ պարամետրական թեստերի, կատեգորիկ փոփոխականների անկախության ստուգման թեստերի և պանելային ռեգրեսիոն մոդելի կիրառություն: Հետազոտության համար տեսական հիմք են հանդիսացել հայրենական և արտասահմանյան մասնագիտական գրականությունը, ՀՀ օրենքները, Կառավարության որոշումները, օրենսդրական այլ ակտեր, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության, ՄԱԿ-ի տարբեր հիմնադրամների, Համաշխարհային բանկի, Արժույթի միջազգային հիմնադրամի, Եվրոպական հանձնաժողովի կողմից հրապարակած զեկույցները, հոդվածները և աշխատանքային փաստաթղթերը: Տեղեկատվական հիմք են հանդիսացել վերոնշյալ կառույցների պաշտոնական կայքերը, դրանցում հրապարակված տվյալները, պաշտոնական տեղեկագրերը և ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների բազաները:

Ատենախոսության **ներածությունում** ներկայացված է թեմայի արդիականության հիմնավորումը, հետազոտության նպատալը և խնդիրները, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, հետազոտության մեթոդական, տեսական և տեղեկատվական հիմքերը, արդյունքներն ու նորոյթները, դրանց գործնական նշանակությունը, ուսումնասիրության շրջանակներում կատարված հրապարակումները, ինչպես նաև ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ **«Միջազգային մրցունակություն, ինովացիա և ինովացիոն քաղաքականություն. տեսագործնական գնահատականներ»** գլխում հեղինակը ներկայացրել է միջազգային մրցունակության գնահատման տեսական մոտեցումները, դրա չափման մեթոդաբանությունը, հիմնավորել ինովացիայի դերը տնտեսության զարգացման և միջազգային մրցունակության ապահովման գործում, վեր հանել ինովացիոն քաղաքականության միջազգային փորձը և դրա իրացման մեխանիզմները՝ մատնանշելով տարբեր երկրների ընկալումները ինովացիոն քաղաքականության վերաբերյալ:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ ինովացիոն համակարգի զարգացման օրենսդրական և գործնական հիմքերը»** գլխում ներկայացվել են ՀՀ ինովացիոն համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքը, ՀՀ ինովացիոն քաղաքականության և ինովացիոն գործունեության օրենսդրական կարգավորումների շրջանակը, ՀՀ-ում գործող ինովացիոն ենթակառուցվածքները, հատուկ մատնանշվել են կատարվել մարդկային կապիտալի՝ որպես ՀՀ ինովացիոն ներուժի բարելավման ուղիները:

Ատենախոսության երրորդ՝ **«Ինովացիայի և միջազգային մրցունակության կապի էմպիրիկ վերլուծություն (ՀՀ օրինակով)»** գլխում հանգամանալից կերպով վերլուծվել են ՀՀ ինովացիոն ռեսուրսները և արդյունքները, ինչպես նաև իրականացվել ինովացիայի և միջազգային մրցունակության փոխազդեցության էմպիրիկ վերլուծություն մակրոմակարդակում և միկրոմակարդակում, որի արդյունքում բացահայտվել և գնահատվել է դրանց միջև կապը:

Աշխատանքի **«Եզրակացություններ և առաջարկություններ»** բաժնում կատարվել են հետազոտության եզրահանգումները և ներկայացվել համապատասխան առաջարկներ:

Ատենախոսության **գիտական նորույթը** արտահայտվում է տեսամեթոդական և գործնական նշանակություն ունեցող մի շարք արդյունքներում, որոնցից գիտական նորույթն արտացոլող հիմնական դրույթներն են.

- 126 երկրի կլաստերային վերլուծության արդյունքում բացահայտվել և հիմնավորվել է երկրների կրթական համակարգի արդյունավետության և ընդհանուր ինովացիոն կատարողականի միջև առկա դրական կապը: Վերլուծության արդյունքներով Հայաստանը դասակարգվել է կրթության արդյունավետության և ինովացիոն կատարողականի միջին մակարդակ ունեցող երկրների շարքում:

- Միջազգային մրցունակության վրա մակրոտնտեսական գործոնների ազդեցության գնահատման մոդելով 67 երկրի պանելային տվյալների հիման վրա կատարված ռեգրեսիոն գնահատման արդյունքում բացահայտվել է արտոնագրային հայտերի թվի և արտահանման միջև առկա դրական կապը, սակայն ազդեցության թույլ ուժգնությամբ: Հիմնավորվել է արտոնագրերի աճի դրական ազդեցությունը արտահանման վրա:
- ՀՀ-ում գործունեություն ծավալող ավելի քան 1700 ձեռնարկությունների տվյալների հիման վրա ոչ պարամետրական Wilcoxon Rank Sum մեթոդով կատարված գնահատականներով հիմնավորվել է, որ կազմակերպության չափերը վերջինիս ինովացիոն գործունեությունը նշանակալիորեն սահմանափակող գործոն չէ:
- ANOVA մոդելի կիրառմամբ գնահատվել են ինովացիոն գործունեության ակտիվության տարբերությունները՝ ըստ Տնտեսական գործունեության դասակարգման (NACE խմբեր) տարբեր խմբերի և բացահայտվել ինովացիա կատարելու տեսանկյունից գործունեության ոլորտի նշանակալի լինելը:
- ՀՀ ձեռնարկությունների միկրոտվյալների հիման վրա Chi-Square թեստի կիրառմամբ գնահատվել են նրանց արտահանման շուկաների և ինովացիոն գործունեության փոխառնչությունները: Բացահայտվել է, որ ԵՄ և ասոցացված երկրների շուկաների վրա կողմնորոշված ՀՀ ձեռնարկություններն ավելի հաճախ են ինովացիաներ կատարում:

Ատենախոսության արդյունքները կարող են կիրառվել ինովացիոն քաղաքականության մշակման և իրականացման, հետազոտությունների և մշակումների խթանման քաղաքականության իրականացման գործընթացում՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության, ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և երիտասարդության նախարարության կողմից: Ատենախոսության արդյունքները կարող են ուշագրավ լինել նաև ինովացիաներով և միջազգային մրցունակությամբ զբաղվող մասնագետների համար:

Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի նիստի ընթացքում, «Ամբերդ» հետազոտական կենտրոնում, ՀՀ էկոնոմիկայի նախարարության նորարարության, գիտելիքահենք տնտեսության վարչության քաղաքականության մշակման բաժնում: Ատենախոսության

հիմնական արդյունքներն ամփոփվել են 5 հոդվածում, որոնցից 3-ն ինդեքսավորված են միջազգային գիտաչափական Web of Science և Scopus շտեմարաններում:

Միաժամանակ հարկ է նշել, որ ատենախոսության շրջանակներում իրականացված ուսումնասիրություններն ու վերլուծությունները գերծ չեն թերություններից, որոնց կապակցությամբ կատարված դիտողությունները պետք է արժանանան հեղինակի ուշադրությանը՝ վերջինիս կողմից հետագա ուսումնասիրությունները շարունակելիս: Դրանք են.

1. Աշխատանքի 1.3 ենթագլխում հեղինակն իրականացրել է ինովացիոն քաղաքականության միջազգային փորձի և դրա իրացման մեխանիզմի ուսումնասիրություն՝ տալով աշխարհի երկրների կամ երկրների խմբի (S<24 երկրներ, ԵՄ երկրներ, ցածր եկամուտ ունեցող երկրներ) կողմից կիրառվող քաղաքականության ընդհանրական բնութագրում և գնահատական՝ առանց մատնանշելու առանձին երկրների փորձը և դրանց արդյունքները (հաշվի չառած մեկ-երկու երկրների կողմից ինովացիոն քաղաքականության առավել տարածված գործիքների դիտարկումը), ինչը հնարավորություն կտար այս կամ այն երկրի կողմից իրականացվող ինովացիոն քաղաքականության արդյունավետության գնահատման միջոցով հիմնավորել վերջինիս այդ քաղաքականության իրացման մեխանիզմների գծով հեղինակի կողմից ներկայացված առաջարկները:
2. Հեղինակն աշխատանքի 3.2 ենթագլխում մակրոմակարդակում ինովացիոն և միջազգային մրցունակության կապն ուսումնասիրելու համար իրականացրել է էմպիրիկ վերլուծություն՝ պանելային տվյալներով ռեգրեսիոն մոդելի օգնությամբ՝ կիրառելով ինովացիայի մոտարկումը՝ մեկ միլիոն մարդու հաշվով արտոնագրային հայտերի թվի, և մրցունակության մոտարկումը՝ մեկ միլիոն բնակչի հաշվով արտահանման ցուցանիշի ընտրությամբ, այն դեպքում, երբ աշխատանքում զգալի հատված (1.3 և 3.1 ենթագլուխներ) նվիրվել է գլոբալ ինովացիոն և գլոբալ մրցունակության համաթվերի ուսումնասիրությանը, որոնց արդյունքները, սակայն, չեն կիրառվել մոդելում:
3. Թեև հեղինակը աշխատանքի 1-ին գլխում հանգամանալից իրականացնում է միջազգային մրցունակության և ինովացիայի ու ինովացիոն գործունեության էության, առանձնահատկությունների և չափման մեթոդաբանության ու գործիքակազմի

ուսումնասիրություն, այնուամենայնիվ աշխատանքի 3.2 ենթաաղյուսում նույնպես անդրադարձ է կատարում միջազգային մրցունակության չափման ցուցիչներին, ինչը որոշ դեպքերում չի վկայում հեղինակի կողմից կատարվող որոշ վերլուծությունների համակարգվածության մասին:

4. Հեղինակը, կարևորելով ինովացիոն գործունեության զարգացման համար մասնավոր ֆինանսավորման հնարավորությունների առկայությունը (էջ 130) և նշելով, որ 2006թ. ընդունված «Ինովացիոն գործունեության պետական աջակցության մասին» ՀՀ օրենքը, այնուամենայնիվ, քիչ է շոշափում նշված գործունեության ֆինանսավորման պայմանները (էջ 48)՝ չի մատնանշում, թե ինչ մեխանիզմներով է հնարավոր ապահովել ֆինանսավորման խնդիրը և, մասնավորապես, դրա ուղիների բազմազանեցումը՝ հատկապես մասնավոր ներդրումների տեսանկյունից (հաշվի առնելով, որ ներկայումս ՀՀ-ում ինովացիոն ֆինանսավորման առումով առավել մեծ է պետության կողմից վենչուրային ֆոնդում կատարվող ներդրումները):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ


Ներկայացված դիտողությունները չեն ազդում հետազոտության արդյունքների վրա և չեն նվազեցնում աշխատանքի գիտական արժեքը, միաժամանակ դրանք կարող են հիմք հանդիսանալ հեղինակի հետագա ուսումնասիրությունների իրականացման համար: Ռուզաննա Բարիջանի Թադևոսյանի թեկնածուական ատենախոսությունը ունի գիտագործնական կարևոր նշանակություն, ինքնուրույն և ամբողջական հետազոտություն է: Հեղինակը դրսևորել է մասնագիտական լուրջ գիտելիքներ և վերլուծելու բարձր կարողություններ ու հմտություններ, ինչի մասին են վկայում ատենախոսության շրջանակներում ստացված արդյունքները: Հետազոտության արդյունքները միանշանակ կարելի է դիտարկել որպես նորույթ և նոր մոտեցում աշխատանքի ընթացքում բարձրացված խնդիրների լուծման համատեքստում:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է հետազոտության բովանդակությանը և արտացոլում է աշխատանքի դրույթներն ու արդյունքները:

Ռուզաննա Բարիջանի Թաղևոսյանի «Նորաստեղծությունների ազդեցությունը տնտեսության միջազգային մրցունակության վրա (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման» կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև ԲԿԳԿ կողմից թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող այլ պահանջներին, ուստի հեղինակն արժանի է Ը.00.06 «Միջազգային տնտեսագիտություն» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Գրախոսող՝

**տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ Կորպորատիվ բիզնեսի
կառավարման ծառայության
Կորպորատիվ պրոդուկտների մենեջեր՝**



Մ. Ա. Ավագյան

**Մ. Ա. Ավագյանի ստորագրությունը հաստատում եմ՝
«Ֆասթ Բանկ» ՓԲԸ Աշխատակազմի ղեկավար՝**

Լ. Գևորգյան

02.07.2024 թ.